''ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ'' ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ ՄԱՐԻԵՏԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ ԴԱՍՎԱՐ

ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Հեքիաթի ուսուցումը ըստ չափորոշիչների----------4
2. Հեքիաթը և նրա դաստիարակչական արժեքը----------7
3. Կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում հեքիաթների հոգեբանական առանձնահատկությունները----------9
4. Հեքիաթի ուսուցման մեթոդները----------10
5. Հեքիաթի ուսուցումը, դասի նկարագիրը----------14

Ներածություն

Հիմանահարցի արդիականությունը՝

Հեքիաթի ուսուցումը տարրական դպրոցում և կրտսեր դպրոցականի՝ ընդհանուր զարդացման գործում՝ կարևոր է միշտ: Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով խոսքերով; Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա թողնող ազդեցությունը:

Աշխատանքի Նպատակը՝

Ծշնորհիվ իրենց մեջ թաքնված բազում իմաստների, հնարավորությունների, մեխանիզմների, հեքիաթների միջոցով զարգացնել երեխայի հետ շփման, կենսափորձի փոխանցման, անձնային լավագույն հատկանիշների զարգացման արդյունավետ ուղի:

Հետզոտության խնդիրները՝

- Առանձնացնել հեքիաթի ուսուցման մեթոդները դասի ընթացքում;
- Համոզվեցինք, որ դասը պիտի իրակացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրատոմսերի կիրառմամբ;
- Բացահատել հեքիաթի բովանդակության երևակայական կողմը;

1. Հեքիաթի ուսուցումը ըստ չափորոշիչների

Մայրենի լեզվի դասընթացը աշակերտին հնարավորություն կտա ստանալու անհրաժեշտ գիտելիքներ գողարվեստական գրականու- թյան, այդ թվում՝ բանահյուսության արձակ ու չափածո տարբեր ժանրերի / հեքիաթ, հանելուկ, պատմվածք և այլն/:

Տարրական դպրոցում գործնականորեն ծանոթանում են լեզվի հիմնական միավորներին, քերականական և ուղղագրական իրո- ղություններին / առանց սահմանափակումների /:

Ընթերցանության նյութերի ծրագրայինն թեմաները նույնպես խո- րացվում են դասարանից դասարան՝ սովորողների մտահորիզոնի լայնացմանը և գիտելիքների խորացմանը զուգընթաց:

Հեքիաթ,- Ժանրի բնորոշումը: Տեսակները՝ կենդանական, կախարդական կամ հրաշապատում և իրապատում հեքիաթներ:

Հեքիաթին հատուկ սկիզբն ու ավարտը, բովանդակությունը:Բարու և չարի պայքարը: Բարու հաղթանակը: Հեքիաթը որպես ,,հավերժական խորհրդանիշների,, արտահայտություն: Հեքիաթի լեզվական առանձնահատկությունները: Ժողովրդական հեքիաթ, հեքիաթի գրական մշակում, հեղինակային հեքիաթ:Դրանք ընդհանրությունները և տարբերությունները:

2. Հեքիաթը և նրա դաստիարակչական արժեքը

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են: Դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակվում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ:

Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են նրա ընթերցումն ու դարձնում ցանկալի: Այդ է պատճառը, որ թե մեծերը և թե փոքրերը միևնույն հեքիաթը կարդում են բազմիցս ամեն անգամ նրանում հայտնաբե- րելով նորը, ուսանելին, գրավիչն ու հետաքրքիրը;

Հեքիաթը ունի հզոր դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով; Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա թողնող ազդեցությունը; Հեքիաթը միաժամա նակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է;

Հեքիաթները ստեղծվել են մարդկության մանկության շրջանում, երբ գիտության անբավարար զարգացվածության աստիճանը չի տվել այլ ճանապարհով իր երազներին երևակայական լուծում;

Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ իրապատում, հրաշապատում և կենդանական;

Կենդանական հեքիաթները հյուսվել են հնադարում, նրանց հերոսները հիմնականում կենդանիներն են: Ժողովուրդը կենդանիներին անձնավորել է, նրանց դրել գործողությունների և հարաբերությունների մեջ՝ պարզ, սակայն դաստիարակչական, բարոյական արժեք ներկայա ցնող լուծումներ տալով դրանց;

Իրապատում հեքիաթներն ունենում են կենցաղային, հերոսական, սոցիալական և այլ բովանդակություն; Հեքիաթների այդ տեսակի համար առավել կարևոր են իրական, գործնականում իրագործելի դեպքերի ընթացքն ու ստացած լուծումները:

Հեքիաթի դասավանդումն իրականացվում է չորս քայլով;

- հեքիաթի ընթացքում՝բովանդակության ամբողջական ընկալման նպատակով;

- հեքիաթի երևակայական կողմի բացահայտում;
- հեքիաթի բարոյախոսական իմաստի /դաստիարակչական արժեքի / վերհանում;

- հեքիաթի լզվի և ոճի վերլուծություն;

Հեքիաթի ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես պատմվածքը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն; Սա նշանակում է՝ դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչներով հեքիաթը ուսումնասիրելուց հետո պիտի անցնել բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը; Սակայն կարևորենք, որ այն չպետք է շատ բացահայտ ու ,,կոպիտ,, կերպով կատարել, այդ դեպքում հեքիաթը կդադարի նպաստել երեխաների վառ երևակայության զարգացմանը; Երեխաները սիրում են հեքիաթները և ունկնդրել, և կարդալ; Նախ անհրաժեշտ է, որ երեխաները որոշեն,թե իրենց կարդա ցած /կամ ունկնդրած/ հեքիաթում նկարագրված դեպքերից, որոնք կարող են կատարվել իրականում /Կարմիր գլխարկը կարող է տատիկին կարկանդակ տանել, գայլի հանդիպել/, որոնք անիրական են, մտացածին, երևակայական /նա չէր կարող գայլի հետ հանդիպել/;

Աղվեսը այդպես վարվել արագիլի հետ /ճաշը լցրեց տափակ պնակի մեջ/;

Աշակերտներին օգնելու համար կարելի է տալ պատասխանների խումբ՝թողնելով, որ նրանք ընտրեն իրենց համար ընդունելի պատասխանը.

ա/ ուզեց կատակել,

բ/ ցգիտեր որ արագիլը չի կարող այդպիսի պնակից օգտվել,

գ/ աղվեսը հյուրասեր չէր, և հիմնավորեն իրենց ընտրությունը

Հաջորդ խնդիրը, որը պիտի անպայման կարևորի հեքիաթի ուսուցման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքն է Մի քանի հեքիաթների լեզուն և ոճը իրար հետ համեմատելուց և նրանց միջև ընդհանրությունները գտնելուց հետո /երեխաների ուշադրությունը հրավիրել հեքիաթի սկզբի, ավարտի,նրա հատուկ լեզվի և ոճի վրա /, որոշել հեքիաթի ու պատմվածքի ընդհա նրությունները և ասել՝ ընթերցած նյութը հեքիաթ է, թե պատմվածք:

3. Կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում հեքիաթների ազդեցության հոգեբանական առանձնահատկությունները

Երեխան սպառողի իր պարտքը կատարելով պետք է հնարավո- ություն ստանա նաև որպես ստեղծագործող հանդես գալու:

Խնդիրը հեքիաթներ սարքելու համակարգ չէ, այլ ֆանտազիայի օգտա- գործումը՝ որպես իրականության ճանաչողության միջոց; Մի ճանապարհ, որին հետևելով կյանքի խորխորատներն ես սուզվում, ոչ թե ամպերի մեջ հատում; Եթե կուզեք, այն պայքարի զենք է, ոչ թե վահան; Երեխան հեքիաթը լսելիս, այն ընկալելիս տիրապետում է բառային միավորների որոշակի հարաբերակցությանը, իր համար բացահայտում բացասական ձևի կիռառություն, այն ինչ կապի դերը; Եվ այնուամենայնիվ հեքիաթն ըստ երևույթին նրան լեզվի մասին առատ տեղեկություններ է տալիս; Հեքիաթը հասկանալ ճգնելուվ նա միաժամանակ ճգնում է այն բառերը հասկանալ, որոցից բաղկացած է այն;

Հայտնի է, որ գոյություն ունեն հեքիաթների մի քանի հիմնական տեսակներ, դրանց կիրառումը սահմանափակված է իրենց բնորոշ գործառույթներով՝ դիդակտիկ, հոգեշտկողական, մեդիտատիվ, հոգեթերպետիկ և այլն; Հեքիաթների կիրառումն մանկավարժականգործընթացում կարող է իրականացվել բազմագործառութային ձևով:

Երեխայի վարքի փոփոխության, ինչպես նաև որոշ արժեքների զարգացման նպատակով մանկավարժը կարող է ստեղծել, կամ կիրառել որևէ հեղինակային հոգեշտկողական հեքիաթ: Հոգեշտկողական հեքիաթների և պատմությունների շնորհիվ թերապևտը հնարավորու թյուն է ստանում աննկատ, դիմադրությունը հաղթահարելով՝ ցույց տալ երեխայի վարքի ոչ արդյունավետ ձևերը, դրանք փոխարինել պատշաճ վարվելաձևով և հասկացնել կատարվածի իմաստը:

Հոգեշտկողական հեքիաթները խիստ նպատակային են, դրանց ստեղծման համար Տ. Զինկևիչ-Եվստենգնեևան առաջարկում է հետևյալ քայլաշարը.

- Ընտրել հերոս, որը մոտ է երեխային տարիքով, սեռով և բնավորությամբ

- Նկարագրել հերոսի կյանքը կախարդական աշխարհում այնպես, որ այն մոտ լինի երեխայի իրականությանը
- Ցուցադրել հերոսի դժվարությունները և ապրումները, որոնք նման են երեխայի իրական կյանքի իրավիճակներին և զգացումներին
- Նկարագրել հերոսի վարքը՝ ստեղծված իրավիճակից ճանապարհներ փնտրելու նպատակով: Նա կարող է հանդիպել մոգական օգնականների, կախարդի, իմաստուն ծերունու և այլն: Կարևորն այն է, որ պատմության կամ հեքիաթի միջոցով թերապևտը ցույց է տալիս երեխային այլընտրանքային ճանապարհներ և վարքա ձևեր, դրանով օգնում գտնել կատարվածի դրական տեղաշարժը;
- ցույց տալ թե ինչպես է հերոսը հասկանում իր սխալները և սկսում ճիշտ գործել:

Հոգեշտկողական հեքիաթները բավականին հաջողությամբ կիրառվում են վարքային տարբեր խնդիրների լուծման ժամանակ:Դրանցից են վախերը, ագրեսիվությունը, չընդունված լինելը,զանազան կորուստները և այլն:
Երեխան յուրացնում է դժվար իրավիճակների հաղթահարման առավել արդյունավետ ուղիներ, կարողանում է հերոսի հետ մտովի անցնել հուզող ճանապարհով, խորհել անհանգստացնող հարցերի շուրջ և ստանալ համապատասխան պատասխաններ ու լուծումներ; Երեխայի ենթագիտակցական ոլորտը հարստանում է մարդկային կարևորագույն արժեքների վերաբերյալ տեղեկատվությամբ: Իսկ եթե մանկավարժն այդ ամենը քննարկում և վերլուծում է երեխայի հետ, վերջինս սկսում է գիտակցել իր վարքի տարբեր դրդապատճառները և գնահատում դրանք;
Լսելով նմանատիպ հեքիաթներ երեխայի ենթագիտակցական ոլորտում
կուտակվում է դժվարությունների, շրջապատող աշխարհի հետ համա- գործակցության, կենսական իրավիճակների բավականաչափ հարուստ պահոց: Նմանատիպ հեքիաթների քննարկումը երեխայի հետ, դրանց վերլուծությունը ակտիվացնում են տվյալ պահոցը և

երեխան կարողանում է կապեր տեսնել տարբեր երևույթների միջև, գիտակցել սեփական ներուժը, ցանկությունները, սպասելիքները և արարքների դրդապատճառները:

Այսպիսով կարելի է նկատել,որ շնորհիվ իրենց մեջ թաքնված բազում իմաստների, հնարավորությունների, մեխանիզմմների՝ հեքիաթները դարեր ի վեր համարվել են երեխայի հետ շփման, կենսափորձի փոխանցման, անձնային զարգացման լավագույն միջոցներից մեկը: Հեքիաթում թաքնվածկարևորագույն ՝ փոխակերպման գաղափարի

միջոցով փոքրը, աղքատը, դժվարություններ ունեցողը հեքիաթի վերջում կարողանում է հաղթահարել բազում դժվարություններ և դառնալ ուժեղ, հարուստ, առաջնորդ; Հեքիաթները նպաստում են երեխայի անձնային աճին և հասունացմանը: Այստեղ միշտ հաղթում է բարին; Սա ևս մեկ անգամ ուղերձ է հղում երեխայի անգիտակցականին այն մասին, որ նրա անձի լավագույն կողմերը կհաղթեն, ինչպես նաև մարդկային կարևորագույն արժեքները միշտ էլ կմնան գերակայող:

4. Հեքիաթի ուսուցման մեթոդները

Շուռ տված հեքիաթները

Կարմիր գլխարկը չար է, իսկ գայլը՝ բարի; Մոխրոտը՝ անպետք աղջիկը մեղմ ու բարի մորը կատաղեցնում է…….

Այսպիսով, սխալ մեթոդը նոր մտքի է բերում, ինչ-որ նկարի ուրվագիծ հիշեցնում: Հեքիաթը շուռ տալու մեթոդը հարմար է ազատ պատումի համար մի ելակետ շոշափել, որ հնարավոր է ցանկացած ուղղությամբ ինքնուրույնաբար զարգացնել:

Իսկ հետո ինչ եղավ.

- Իսկ հետո,- հարցնում է երեխան, երբ պատմողը լռում է;

Հեքիաթը վերջացել է, սակայն հետո լինելիքի համար միշտ տեղ կա; Խաղի էությունը հեքիաթի բնազդական վերլուծությունն է; Երևակայության ինչ-որ ինքնամուղ ուժ է հայտնվում, որը ոչ թե նվազելու, այլ ուժեղանալու, որոշ չափով ավտոմատիզմ ձեռք բերելու միտում ունի:Սակայն նոր հեքիաթը ծնունդ էէ առնումոչ այն պատճառող, որ երեխանայդ ավտոմատիզմ իշխանությունն է նձնատուր լինում, այլ որովհետև ինքն այն դատողականացնում է, տարերային պատումի մեջ որոշակի ուղղվածություն, կառուցողական սաղմ նկսրելու ընդունակություն է դրսևորում:

Հեքիաթների շիլափլավ.

Անտառում Կարմիր գլխարկը Մատնաչափիկին ու նրա եղբայրներին է հանդիպում, նրանց արկածներն իրարեն հյուսվում ու նոր հունով ընթանում; Մոխրոտն ամուսնանում էՄորուքի հետ; Նման մշակման ենթարկվելով՝ ամենամաշված կերպարներն անգամ կենդանանում են, նոր շիվեր տալիս, և անսպասելիորեն դրանցից նոր ծաղիկներ ու պտուղներ են աճում; Այս խաղում իշխող ստեղծագործական երևակայության

երկանդամությունը տիպականից միայն նրանով է տարբերվում, որ այն երկու հատուկ, ոչ թե հասարակ անուններից կամ պարզապես ենթակայից ու ստորոգյալից է կազմված:

Եթե երեխան իրականում մթությունից վախենում է, ապա նա՝ որպես հեքիաթի հերոս, ամենևին էլ ոչ. Ուրիշները չեն համարձակվում, բայց նա գնում է այնտեղ, ուր գնալուց բոլորը վախենում են; Նա բարի է, բոլորին օգնում է; Նման պատմություններով մեր փորձն ենք հաղորդում, օգնում ենք կողմնորոշելու, իրերի աշխարհում իր տեղը որոշելու, կապերի այն համակարգը հասկանալու, որի կենտրոնն ինքն է:
Երեխան դաստիարակվում է, մտավորապես և բարոյապես զարգանում է միայն մարդկային անձնավորության ազդեցությանը: Դա մատղաշ հոգու համար արևի կենսատու ճառագայթ է, որը ոչ մի բանով չի կարելի փոխարինել,- գրում է Ուլինսկին:

5. Հեքիաթի ուսուցումը, դասի նկարագիրը

Դասի թեման՝ ,, Ով աշխատի, նա կուտի ,, հեքիաթի նպատակը.
ա/ ճանաչողական և դաստիարակչական որոշակի խնդիրների լուծում
բ/ մտածողության ակտիվացում
գ/ համագործակցային աշխատանքի իրականացում
դ/ վարքի չափանիշների մշակում
Անհրաժեշտ պարագաներ
ա/ ընթերցանության տեքստ
բ/ հասկի, հացի տեսակների նկարներ
գ/ ասացբաձքների պաստառ
դ/ հեքիաթի բովանդակությանը վերաբերող առանձին նկարներ
ե/ Վեննի դիագրամ
զ/ ,,Ծույլ գայլը ,, հեքիաթը

Դասի ընթացքը
1-ին փուլ
1-ին քայլ,Կիրառվում է մտագրոհի մեթոդը; Գրատախտակին ամրացնում
Եմ հասկի և հացի պաստառները; Հարցնում եմ, թե ինչ գիտեն հացի մասին, ինչպես է ստեղծվում այն; Թույլ եմ տալիս զույգերով մտածել և գրի առնել իմացածը; Այնուհետև

գրատախտակին գրում ենք բոլոր պատասխանները: Խոսում ենք հացթուխի մասնագիտության մասին:

Հացի և նրա ստեղծման մասին բավականին տեղեկություններ հաղորդելուց հետո հայտնում եմ, որ քիչ անց ընթերցվելիք հեքիաթում նույնպես հաց են ստեղծում, բայց ոչ հացթուխները:

2-րդ քայլ,- Գրատխտակին գրում եմ դասի վերնագիրը և հենակետային մի քանի բառ,՝ հավիկ, մուկիկ, ծիտիկ, հատիկ, հաց; Ուշադրություն եմ հրավիրում նախ վերնագրին

/ասացվածք է /; Այնուհետև հնձնարրում եմ ուշադիր ընթերցել բառերը և կանխգուշակել այն պատմությունը, որը քիչ անց պետք է ընթերցվի:

2-րդ փուլ՝ իմաստի ընկալում

1-ին քայլ,- Աշակերտները մտքում ընթերցում են հյութը և համեմատում վերոհիշյալ պատմությունների հետ; Նրանք պետք է ասեն՝ ով էր ծույլ, ով՝ աշխատասեր:

2-րդ քայլ,- Բարձրաձայն ընթերցում ենք հատված առ հատված;

1 հատված

Մի խրճիթում ապրում էին մուկիկը, ծիտիկը և հավիկը;

Մի օր քուջուջ անելիս հավիկը մի հատիկ գտավ ու գոչեց.

- Հատիկ եմ գտել, հատիկ եմ գտել; Ով կտանի աղալու;
- Ես չէ,- ասաց մուկիկը;
- Ես էլ չէ,- ասաց ծիտիկը;

Ինչ աներ հավիկը; Հատիկը տարավ ջրաղաց ու աղաց;

1-ին դադար

Այս հատվածն ընթերցելուց հետո փորձում ենք վերնագրել այն; Բազմաթիվ վերնագրերից ընտրում ենք ամենախոսունը և գրում գրատախտակին /օրինակ, ,,Հավիկն ու հատիկը ,,/; Այնուհետև կշռադատման հարցեր եմ ուղղում տվյալ հատվածի շուրջ:

ա/ Ովքեր էին ապրում խրճիթում;

բ/ Հավիկն ինչ գտավ; Ինչ էր անում, երբ գտավ;

գ/ Ինչ առաջարկեց;

դ/ Ինչպես ընդունեցին մուկիկն ու ծիտիկը;

ե/ Ինչ արեց հավիկը; Ինչ է ջրաղացը;

1 հատված

– Այլուրն ով կտանի տուն

- Ես չէ,- ասաց մուկիկը;

- Ես էլ չէ,- ասաց ծիտիկը;

Հավիկն այլուրն շալակեց, տարավ տուն;

2-րդ դադար

Հատվածի համար վերնագիր եմ ընտրում; Հարցերի միջոցով ամփոփում եմ բովանդակությունը;

ա/ Ինչ աշխատանք պետք է կատարեին ծիտիկն ու մուկիկը;

բ/ աշխատանքն ով կատարեց;

գ/ Ինչպես է ցորենն այլուր դառնում;

3 հատված

- Ով խմոր կանի,- հարցրեց հավիկը;
- Ես չէ,- ասաց մուկիկը;
- Ես էլ չէ,- ասաց ծիտիկը;

Հավիկը խմորը հունցեց;

3-րդ դադար

ա/ Վերնագրում ենք նաև այդ հատվածը և հարցերի միջոցով ամփոփում;

բ/ Ինչ է խմորը; Ինչպես են ստանում; Ինչ է հունցելը:

4 հատված

- Թոնիրը ով կվառի,- հարցրեց հավիկը;
- Ես չէ,- ասաց մուկիկը;
- Ես էլ չէ,- ասաց ծիտիկը;

Հավիկը թոնիրը վառեց;

4-րդ դադար

ա/ Վերնագրել;

բ/ Ինչ արեց հավիկը;

գ/ Բացատրել թոնիր բառը;

5 հատված

- Հացը ով կթխի;
- Ես չէ,- ասաց մուկիկը;
- Ես էլ չէ,- ասաց ծիտիկը;

Հավիկը հացը թխեց և դրեց սեղանին;

5-րդ դադար

ա/ Վերնագրել;

բ/ Ինչ արեց հավիկը; Ինչու ինքը թխեց;

6 հատված

- Հացը ով կուտի,- հարցրեց հավիկը
-
- Ես,- գոչեց ծիտիկը և մոտեցավ սեղանին;
- Ես,- գոչեց մուկիկը և մոտեցավ սեղանին;

Հավիկը նրանց հեռացրեց սեղանից և ինքը մենակ կերավ;

6-րդ դադար

ա/ Վերնագրել;

բ/ Ինչպես ավարտվեց հեքիաթը; Արդյոք դուք ակընկալում էիք այդպիսի ավարտ;

գ/ Բացատրել գոչել բառը;

դ/ Ինչ որ բան փոխվեց մուկիկի և ծիտիկի մոտ այս հատվածում;

3-րդ փուլ

1-ին քայլ – Համեմատել կանխագուշակված պատմության հետ;

2-րդ քայլ - Այս փուլում նախ օգտագործում եմ հարց ու պատասխանի մեթոդը;

ա/ Ինչ հասկացաք այս հեքիաթից;

բ/ Որն է դրա գաղափարը;

գ/ Ինչ խնդիրներ դրեց հավիկը մուկիկի և ծիտիկի առջև;

դ/ Ինչպես լուծվեց վերջին խնդիրը;

ե/ Հեքիաթում ինչն էր լավ, ինչը՝ վատ: Խրատեք մուկիկին և ծիտիկին; Բնութագրեք;

զ/ Արդարացրեք ու մեղադրեք հավիկին, մուկիկին և ծիտիկին;

է/ Ինչ կլիներ, եթե մուկիկն ու ծիտիկը համաձայնեին օգնել հավիկին:

3-րդ քայլ - Խաթարված հերթականությամբ գրատախտակին դնում եմ հեքիաթի բովանդակությանը համապատասխանող նկարներ; Հանձնարարում են դասավորել ճիշտ հերթականությամբ; Դրանով նրանց հիշողության մեջ ամրակայվում է հացի ստեղծման ուղին:

4-րդ քայլ - Նորից հիշում ենք, որ հեքիաթի վերնագիրը միաժամանակ ասացվածք է; Գրատախտակին փակցնում եմ ասացվածքների մի պաստառ; Կարդում, բացատրում ենք; Ով ալարի, ոչ դալարի;

Մարդը ինքը պիտի աշխատի, որ կերածը հալալ լինի;
Աշխատող խոփը կփայլի
5-րդ քայլ – Արտադասարանական ընքերցանության ժամանակ ընթերցում եմ ,,Ծույլ գայլը,, հեքիաթը; Դասի ընթացքում զուգահեռներ ենք անցկացնում ծույլ գայլի, հավիկի, մուկիկի ու

ծիտիկի միջև; Հարցնում եմ՝ Ինչու գայլը չուզեց հաց ուտել; Մեր հեքիաթի որ հերոսներին է նա նման; Այնուհետև գծում եմ Վեննի դիագրամը; Այն օգնում է հակադրել կամ համադրել գայլին ու մուկիկին, բացահայտել ընդհանրությունները:

Գայլ		Մուկ
կենդանի		կրծող
գիշատիչ	ծույլ	կենդանի
ծույլ	կենդանի	ծույլ
մեծ	վախկոտ	փոքրիկ
վայրի	/ շնից,	վախկոտ
գորշ	կատվից /	մոխրագույն

Այս փուլի վերջում համգործակցային աշխատանքի միջոցով ամրապնդում եմ անցածը

1. խումբ՝ նամակ գրել մուկիկին ու ծիտիկին;
2. խումբ՝ գրել հնգյակ հաց բառով;
3. խումբ՝ հորինել հեքիաթի շարունակությունը;
4. խումբ՝ շարադրել հեքիաթ;
5. խումբ՝ կազմել գիրք և նկարազարդել;

Վերջում յուրաքանչյուր խումբ իր աշխատանքը ներկայացնում է դասարանին և գնահատվում:

Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը; Պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, դիմախաղերը օգնում են, որ երեխաների տպավորություններն ավելի պյծառ ու կենդանի լինեն; Ավելի շահեկան է հեքիաթը պատմել ոչ սովորական պայմաններում՝ գորգի վրա թիկնած, կոճղերի շուրջ հավաքված, խորհրդավոր դեկորների և լույսերի առկայության պայմաններում և այլն:

Նշենք, որ երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմել; Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայությսն թռիչքին:

Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի կամ աշակերտների կազմած նկարներով պլանը; Սա պատմելու ուսուցման առաջին փուլն է; Հեքիաթի

վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով և այլ եղանակներով; Պիտի հանձնարարել, որ երեխաներն անգիր սովորեն այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում և պատմելիս անգիր արտասանեն դրանք:

Հեքիաթի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան

- նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ,
- հեքիաթի ամբողջական ընթերցում
- հեքիաթի ընթերցում մտքում / աշակերտների կողմից /,
- բարձրաձայն ընթերցանություն / կարդում են աշակերտները /՝ մեկնաբանություններով,
- բառային աշխատանք,
- բնագիր ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման նպատակով,
- աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,

- պատմելու նախապատրաստում, պատմում,
- ամփոփում,:

,, Հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ ու շատ նման է մայրական կաթին ,,,- ասում էր Ղ. Աղայանը

. Աշոտ Տեր-Գրիգորյան ,, Հայոց լեզվի մեթոդիկա ,,

ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով հեքիաթի ուսուցումը տարրական դպրոցում և կրտսեր դպրոցականի՝ ընդհանուր զարդացման գործում՝ եկել ենք այն եզրակացության, որ հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով խոսքերով; Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա թողնող ազդեցությունը:

Հեքիաթները լինում են 3 տեսակ՝ իրապատում,

Կենդանական հեքիաթները հյուսվել են հնադարում, նրանց հերոսները հիմնականում կենդանիներն են

Իրապատում հեքիաթներն ունենում են կենցաղային, հերոսական, սոցիալական և այլ բովանդակություն;

Կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում հեքիաթների ազդեցության հոգեբանական առանձնահատկությունների մասին հոսելիս առանձնացրել ենք դիտակտիկ, հոգեշտկողական, մեդիատիվ , հոգեթերապևտիկ հեքիաթների տեսակները;

Հոգեշտկողական հեքիաթների և պատմությունների շնորհիվ թերապևտը հնարավորու թյուն է ստանում աննկատ, դիմադրությունը հաղթահարելով՝ ցույց տալ երեխայի վարքի ոչ արդյունավետ ձևերը, դրանք փոխարինել պատշաճ վարվելաձևով և հասկացնել կատարվածի իմաստը:

Աշխատանքի ընթացքում համոզվեցինք, որ շնորհիվ իրենց մեջ թաքնված բազում իմաստների, հնարավորությունների, մեխանիզմների հեքիաթները դարեր ի վեր համարվել են երեխայի հետ շփման, կենսափորձի փոխանցման, անձնային լավագույն միջոցներից մեկը;

Առանձնացրել ենք հեքիաթի ուսուցման մեթոդները դասի ընթացքում; Համոզվեցինք, որ դասը պիտի իրակացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրատոմսերի կիրառմամբ; Հետո պիտի անցնել հեքիաթի բովանդակության երևակայական կողմի բացահատմանը;

Հեքիաթի բովանդակության և գաղափարի վերլուծություն, հերոսների բնավորությունների առանձնահատկությունների քննարկում կատարելուց հետո կարելի է անցնել հեքիաթի բեմականցմանը;

Ներկայացնելով հեքիաթի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան՝ մտաբերեցի Ղ. Աղայանի խոսքը. ,, Հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ և շատ նման է մայրական կաթին ,,;

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի է, որ հայկական որոշ հեքիաթներ մուլտֆիլմի տեսքով առաջարկեն երեխաներին;

Ունենալ հեքիաթների պատկերազարդ գրքեր;

Արտադասրանական ընթերցանությունների ժամանկ խմբակներին ընդգրկել դաստիարակչական նշանակություն ունեցող հեքիաթներ:

Բենականացնել այն հեքիաթը, որի հերոսները ավելի մեծ տպավորություն են թողնում երեխաների վրա:

Օգտագործված գրականություն և հղումներ

1. ,, Աշոտ Տեր-Գրիգորյան ,, Հայոց լեզվի մեթոդիկա ,, Երևան 1980
2. ,, Ջուլիետա Գյուլամիրյան ,, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա ,, Երևան2009
3. Նախաշավիղ 3. 2011
4. Նախաշավիղ 3. 2007
5. https://www.arlis.am/documentview.aspx?docID=176068